ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«08» «հոկտեմբերի» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 2340-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 630 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Գյումրիի քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 630 որոշման 1344-րդ կետով՝ թույլատրվել է սեփականաշնորհել Լենինի պողոտո 19 շ., 10/6 բն., երկու սենյականոց, 47.95 քմ. ընդհանուր մակերեսով, որից 35.0 քմ. բնակելի, 25 դրամ հաշվեկշռային արժեքով, 1-2, 2-րդ աստիճանի վնասվածությամբ, առանձին մեկուսացված բնակարանը քաղ. Վաղարշակ Շավարշի Էլբակյանի անվամբ, որպես ընդհանուր համատեղ սեփականություն ընտանիքի ներքոհիշյալ անդամների հետ՝

1. Էլբակյան Վաղարշակ Շավարշի
2. Էլբակյան Սվետլանա Սերյոժայի
3. Էլբակյան Սաթենիկ
4. Էլբակյան Ելենա
5. Էլբակյան Շավարշ Վաղարշակի
6. Էլբակյան Մարինե Վաղարշակի

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնում թիվ № ԱԱ № 171019 թվագրմամբ կատարվել է գրանցում Վաղարշակ Շավարշի Էլբակյանի մահվան վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժնում թիվ ԱԲ № 232164 թվագրմամբ կատարվել է գրանցում Ելենա Վաղարշակի Էլբակյանի մահվան վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Սվետլանա Սերյոժայի Էլբակյանը (անձնագիր՝ AL0449730, տրված՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին, 065-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 630 որոշման մեջ փոփոխություն կատարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման

մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Սվետլանա Սերյոժայի Էլբակյանի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 14336 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 630 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) 1344-րդ կետի 1-ին ենթակետից հանել «Էլբակյան Վաղարշակ Շավարշի» բառերը,
   2) 1344-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «Էլբակյան Ելենա Վաղարշակի» բառերը,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սվետլանա Սերյոժայի Էլբակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

2025-10-08 11:07:31 GMT+4
Ստանդարտացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գյումրի, 2025 թվական